«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## «Նախադպրոցական ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանի»

2025թ

Սույն ուղեցույցն ուղղված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) տնօրեններին և միտված է օգնելու նրանց ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական աշխատանքների պլանավորման գործընթացում:

1. Հաստատության տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա պարտադիր փաստաթուղթ է:
2. Հաստատության ՏԱՊ-ը կազմվում է նախորդ ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա, քննարկվում է տվյալ ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում, հաստատվում է տնօրենի կողմից և հրապարակվում է հաստատության պաշտոնական կայքում:
3. Մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների հետ տնօրենն աշխատում է ամենօրյա աշխատանքային գրաֆիկով: Աշխատանքային պլանում աշխատանքները պլանավորված են ըստ ամիսների:
4. Ներկայացվող ՏԱՊ-ի տարբերակն օրինակելի է, և տնօրենները կարող են կատարել փոփոխություններ, ավելացնել գործողություններ իրենց ՆՈՒՀ-ի կարիքների, հնարավորությունների առանձնահատկություններով պայմանավորված:
5. «Աշխատանքի բովանդակությունը» բաժնում նշվում են տվյալ ամսվա համար նախատեսված աշխատանքները:
6. «Կատարող անձինք» բաժնում նշվում է յուրաքանչյուր աշխատանքի կատարող(ներ)ի պաշտոն(ներ)ը:
7. Յուրաքանչյուր շաբաթվա համար նախատեսված սյունակում նշվում է, թե տվյալ ամսվա որ շաբաթում է կատարվելու այդ աշխատանքը ( V նշումով կամ նշվում է ամսաթիվը):
8. «Նշումներ կատարման մասին» բաժնում նշվում է տեղեկություն աշխատանքի կատարման վերաբերյալ:
9. «Ծանոթություն» բաժնում տրված են պլանավորվող աշխատանքի վերաբերյալ ուղղորդումներ:

10. «Լրացուցիչ նշումներ» բաժնում տրվում է պարզաբանում այն աշխատանքների մասին, որոնք պլանավորվել են, սակայն մասամբ են կատարվել, կամ ընդհանրապես չեն կատարվել: Պլանավորումից դուրս կատարված աշխատանքի վերաբերյալ նշումները ևս կատարվում են այս բաժնում:

**Հաստատված է մանկխորհրդի I նիստում**

**Տնօրեն՝ ___________**

**«____» ____________ 20 -- թ.**

«Կազմակերպության անվանումը» ՀՈԱԿ-ի

# Տարեկան աշխատանքային պլան

**----------------------- ուստարի**

| **Աշխատանքի տեսակը** | | **ՍԵՊՏԵՄԲԵՐ** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Աշխատանքի բովանդակությունը** | **Կատարող անձինք** | **I շաբաթ** | **II շաբաթ** | **III շաբաթ** | **IV շաբաթ** | **Նշումներ կատարման մասին** | **Ծանոթություն** |
| **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ** | **Կազմակերպչական մանկավարժական աշխատանք** | «Գիտելիքի օր» միջոցառում | | | | | | | ՆՈՒՀ-ում կազմակերպել թեմային համապատասխան միջոցառում, հերոսների այցելություն, վիկտորինա, կամ թատերական ներկայացում, ստեղծել հետաքրքիր միջավայր և այլն: |
| | | Լրացուցիչ կրթական ծառայությունների պահանջարկի ուսումնասիրում | | | | | | | Ծնողական համայնքին ներկայացվում է լրացուցիչ կրթական ծրագրերի ցանկը, պահանջարկի առկայության դեպքում ձևավորվում են խմբեր: |
| | | Էքսկուրսիաների կազմակերպում● | | | | | | | Տվյալ ամսվա թեմատիկ պլանավորման համատեքստում, հնարավորության դեպքում, իրականացնել էքսկուրսիաներ, բոլոր տարիքային խմբերում: |
| | | Ներքին գնահատման արդյունքների ներկայացում | | | | | | | Ներքին գնահատման հաշվետվության տեղադրում ՆՈւՀ-ի պաշտոնական կայք էջում, ՆՈւՀ-ի ներսում՝ տեսանելի վայրում և ներկայացնել հրապարակման համայնքի կայքում: |
| | | Սաների հարմարունակության գործընթացի կազմակերպում | | | | | | | Յուրաքանչյուր ՆՈՒՀ իր առաձնահատկություններով պայմանավորված կարող է պլանավորել ծնողական համայնքի հետ աշխատանքը՝ օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:<br>Քայլաշարն է.<br>**Քայլ 1.** Անհատական հանդիպումներ սանի և նրա ծնողների հետ: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | **Քայլ 2.** Կարճատև ենթախմբային աշխատանքների կազմակերպում սաների և նրանց ծնողների հետ: Ծնողների մասնակցությունը սաների հետ կազմակերպվող աշխատանքներում ըստ անհրաժեշտության է:<br>**Քայլ 3.** Ծնողական հանդիպումների, քննարկումների կազմակերպում բազմամասնագիտական խմբի հետ: |
| | **Մեթոդական աշխատանք** | Մեթոդժամի անցկացում | | | | | | | Աջակցել ինչպես սկսնակ, անպես էլ փորձառու դաստիարակներին՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում: Օրինակ՝ առաջարկվում է անցկացնել «Պարապմունքի պլանավորման արդյունավետ քայլաշար» թեմայով սեմինար: |
| | | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ ամսական (սեպտեմբեր) կտրվածքով պետք է կատարվի ուսումնադաստիարակչական աշխատանքների առնվազն մեկ դիտարկում: Դիտարկումն իրականացվում է ամբողջ շաբաթվա ընթացքում և արձանագրվում՝ շաբաթական դիտարկման վերջին օրը: |
| | | Պարապմունքի կամ խաղ-զվարճալիքի դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ սեպտեմբեր ամսվա ընթացքում պետք է կատարվի առնվազն երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճալիքի դիտարկում: Օրվա 2-րդ կեսին աշխատող դաստիարակների մոտ կատարվում է ամսական կտրվածքով երկու խաղ-զվարճալիքի դիտարկում: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հայտորոշիչ գնահատման իրականացում | | | | | | | Նպատակն է բացահայտել նախադպրոցական տարիքի սաների զարգացման հինգ ոլորտների զարգացածության առկա մակարդակը՝ նոր ուսումնական տարվան ընդառաջ: Իրականացվում է ուսումնական տարվա սկզբին, մոտ 1-2 ամիս երեխային գործունեության տարբեր ձևերում դիտարկելուց հետո՝ հարցաթերթերի լրացմամբ: |
| | | Սաների ֆիզիկական զարգացման մակարդակի ուսումնասիրում | | | | | | | Իրականացնել սաների ֆիզիկական զարգացման մակարդակի արդյունքների գրանցում: |
| | | Համագործակցություն ՏՄԱԿ-ի հետ ●● | | | | | | | Իրականացնել ԿՁԱՊԿ ունեցող սաների գնահատման և վերագնահատման աշխատանքներ: |
| | **Ծնողների հետ աշխատանք** | Հանդիպում ծնողների հետ՝ ծնողական խորհրդի նիստի անցկացում | | | | | | | Ծանոթացնել ծնողներին նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությանը, ծրագրային նոր պահանջներին: |
| | | Խորհրդատվություն ծնողների համար | | | | | | | Առաջարկվող թեմա՝ «Ինչպես հաղթահարել երեխայի՝ ծնողից բաժանման տագնապը»: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսատ** | Անհրաժեշտ պարագաների, նյութերի ձեռքբերում | | | | | | | Ուսումնական գործընթացը բնականոն սկսելու համար ստեղծել զարգացնող միջավայր, ձեռք բերել գրենական պարագաներ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Նտեսական և վարչական աշխատանքներ** | Ներքին գնահատման հանձնաժողովի կազմի վերաբերյալ հրամանի արձակում | | | | | | | Ներքին գնահատման հանձնաժողովի կազմի մեջ կարող են մտնել առնվազն երեք մանկավարժ ՆՈՒՀ-ից, առնվազն երեք ծնող՝ ծնողական համայնքից և նվազագույնը երկու անձ՝ տեղական ինքնակառավարման մարմնից: |
| | Աշխատանք գործավարի հետ ●●● | | | | | | | Նոր ընդունվող սաների անձնական գործերի կազմում և մուտքագրում՝ նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ:(emis.am) |
| | Աշխատանք բուժքրոջ հետ | | | | | | | Իրականացնել ըստ տարիքային խմբերի սաների ֆիզիկական զարգացման ցուցանիշների գրանցում: |
| | Աշխատանք տնտեսվարի հետ | | | | | | | Ըստ ամիսների սննդի բաշխում: Տարվա տարբեր եղանակներին համապատասխան սննդի ձեռք բերման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում: |
| | Աշխատանք հաշվապահի հետ | | | | | | | Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և շարժի մասին 1-ԹԱԾ եռամսյակային) վիճակագրական հաշվետվություն: |
| | | | | | | | | Գրանցման հայտ՝ վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների: Կատարվում է, երբ ՆՈՒՀ-ն ընդունում կամ ազատում է աշխատակից: |
| | | | | | | | | Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ սեպտեմբեր ամսվա համար: |
| | | | | | | | | Կատարած ծախսերի վերաբերյալ համայնքի ֆինանսական բաժին հաշվետվության ներկայացում, համապատասխան վճարների ստացում: |

Լրացուցիչ նշումներ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

●Ամսական կտրվածքով տրված էքսկուրսիաների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

●●Նշված աշխատանքը լրացվում է միայն այն դեպքում, երբ տվյալ ՆՈւՀ-ում կա ԿԶԱՊԿ ունեցող սան:

●●●Սաների ընթացիկ ընդունելության և ազատման կազմակերպումը լրացվում է տվյալ աշխատանքների կատարման դեպքում:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

| Աշխատանքի տեսակը | | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող անձինք | I շաբաթ | II շաբաթ | III շաբաթ | IV շաբաթ | Նշումներ կատարման մասին | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնադաստ | Կազմակերպչական-մանկավարժական | Ուսումնադաստիարակչական գործընթացի վերահսկողություն | | | | | | | Իրականացնել օրվա երկրորդ կեսին կազմակերպվող խաղ-զվարճալիքների դիտարկում տարիքային տարբեր խմբերում: |
| | | Մանկավարժական փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում | | | | | | | Կազմակերպել մանկավարժական փորձի ուսումնասիրություն՝ թեմատիկ պլանավորման հաշվառմամբ: |
| | | Էքսկուրսիաների կազմակերպում● | | | | | | | Տվյալ ամսվա թեմատիկ պլանավորման համատեքստում, հնարավորության դեպքում, բոլոր տարիքային խմբերում իրականացնել էքսկուրսիաներ: |
| | | Համագործակցություն ԱԻՆ-ի հետ | | | | | | | ՆՈՒՀ-ում իրականացնել տեղական նշանակության վտանգների գնահատման և |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իարակչական աշխատանքներ | արժական աշխատանք | | | | | | | | աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ: |
| | Մեթոդական աշխատանք | Աջակցություն մանկավարժներին | | | | | | | Աջակցել մանկավարժական աշխատողներին՝ ինքնակրթությանն ուղղված թեմաների ընտրության, ուսումնական տարբեր ռեսուրսներից (համացանց, էլեկտրոնային աղբյուրներ. խաղեր և այլն) օգտվելու հասանելիության, ինչպես նաև համապատասխան գրականության ձեռքբերմանն ուղղված աշխատանքներում: |
| | | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ ամսական (հոկտեմբեր) կտրվածքով պետք է կատարվի ուսումնադաստիարակչական աշխատանքների առնվազն մեկ դիտարկում: Դիտարկումը իրականացվում է ամբողջ շաբաթվա ընթացքում և արձանագրվում՝ շաբաթական դիտարկման վերջին օրը: |
| | | Պարապմունքի կամ խաղ-զվարճալիքի դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ հոկտեմբեր ամսվա ընթացքում պետք է կատարվի առնվազն երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճալիքի դիտարկում: Օրվա 2-րդ կեսին աշխատող դաստիարակների մոտ կատարվում է |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ամսական կտրվածքով երկու խաղ-զվարճալիքի դիտարկում: |
| | | Խորհրդատվություն մանկավարժներին | | | | | | | Աջակցել մանկավարժահոգեբանական համակազմին՝ սանի անհատական ուսուցման և զարգացման պլանի (ԱՈւԶՊ) կազմանն ուղղված աշխատանքներում: |
| | | ՏՄԱԿ-ի աջակցությամբ սեմինար, խորհրդատվություն | | | | | | | Կազմակերպել խորհրդատվություններ, սեմինարներ «Նշել թեման» թեմայով: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ծնողների հետ աշխատանք** | Մանկաբույժի աջակցությամբ անհատական զրույցներ, խորհրդատվություններ ծնողներին | | | | | | | Կազմակերպել խորհրդատվություններ, սեմինարներ «Նշել թեման» թեմայով: |
| **Ֆինանսատնտեսական և վարչական աշխատանքներ** | Սաների ընթացիկ ընդունելության կազմակերպում կամ ազատում | | | | | | | | Սաների անձնական գործերի կազմում և մուտքագրում՝ նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ: (emis.am) |
| | Աշխատանք տնտեսվարի հետ | | | | | | | | ՆՈՒՀ-ին անհրաժեշտ կրթական, խնամքի ռեսուրսների ձեռքբերման պարագաների անհրաժեշտության պահանջի քննարկում և աշխատանքների կազմակերպում: Սննդակարգի կազմում՝ ըստ հաստատության սաների սննդի ռեժիմի ցանկի: |
| | Աշխատանք բուժքրոջ հետ | | | | | | | | ՆՈՒՀ հաճախող սաների հիվանդության կանխարգելմանն ուղղված աշխատաքների իրականացում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ուսումնական աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում և համալրում | | | | | | | Աշխատանքը կազմակերպել ըստ դաստիարակների կողմից ներկայացված պահանջագրերի: |
| | Աշխատանք հաշվապահի հետ | | | | | | | Տվյալ ամսվա ուսումնական պարագաների և նյութերի, ինչպես նաև սաների համար նախատեսված սննդամթերքի քանակի հետ կապված քանակական և ֆինանսական հաշվարկների իրականացում, նախահաշվի կազմում: |
| | | | | | | | | Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ հոկտեմբեր ամսվա համար: armstat.am |
| | | | | | | | | Կատարած ծախսերի վերաբերյալ համայնքի ֆինանսական բաժին հաշվետվության ներկայացում: |
| | Ջեռուցման համակարգի աշխատանքը կարգավորող աշխատակցի ընդունում՝ ըստ ջեռուցման սեզոնի սահմանված գրաֆիկի: Կաթսաների շահագործման աշխատանքների նախապատրաստում | | | | | | | Նախապատրաստական աշխատանքներ՝ շենքի ջեռուցման հետ կապված: |

Լրացուցիչ նշումներ---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------

●Ամսական կտրվածքով տրված էքսկուրսիաների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

# ՆՈՅԵՄԲԵՐ

| Աշխատանքի տեսակը | | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող անձինք | I շաբաթ | II շաբաթ | III շաբաթ | IV շաբաթ | Նշումներ կատարման մասին | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ** | **Կազմակերպչական մանկավարժական աշխատանք** | Օրինակելի պարապմունքների կազմակերպում● | | | | | | | Մանկավարժների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը միտված, պլանավորել ըստ տարիքային խմբերի և բաղադրիչների թեմատիկ պարապմունքներ կամ խաղ-զվարճալիքներ: |
| | | Էքսկուրսիաների կազմակերպում●● | | | | | | | Տվյալ ամսվա թեմատիկ պլանավորման համատեքստում, հնարավորության դեպքում, բոլոր տարիքային խմբերում իրականացնել էքսկուրսիաներ: |
| | | Միջոցառումների կազմակերպում●●● | | | | | | | Սաների մասնակցությամբ կազմակերպել թեմատիկ միջոցառումներ, խաղ-զվարճալիքներ, մրցակցային խաղեր և այլն: |
| | | ՆՈՒՀ- ՏՄԱԿ համագործակցություն | | | | | | | ՆՈՒՀ-ի մեթոդիստը և տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը, համատեղ, երկու ամիսը մեկ անգամ, հրավիրում են միասնական ժողով՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրած աջակցության ծառայությունները, արձանագրելու սաների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ ներկայացնելու սանի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ: Միասնական ժողովի արձանագրությունը հաստատում են մեթոդիստը և տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը (Ձև 4): |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Մեթոդական աշխատանք** | Մանկավարժական խորհրդի նիստի նախապատրաստում և անցկացում | | | | | | | Անցկացնել հերթական մանկավարժական խորհրդի նիստը՝ նախապես ներկայացնելով օրակարգը: |
| | | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ ամսական(նոյեմբեր) կտրվածքով պետք է կատարվի ուսումնադաստիարակչական աշխատանքների առնվազն մեկ դիտարկում: Դիտարկումը իրականացվում է ամբողջ շաբաթվա ընթացքում և արձանագրվում՝ շաբաթական դիտարկման վերջին օրը: |
| | | Պարապմունքի կամ խաղ-զվարճալիքի դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ նոյեմբեր ամսվա ընթացքում պետք է կատարվի առնվազն երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճալիքի դիտարկում: Օրվա 2-րդ կեսին աշխատող դաստիարակների մոտ կատարվում է ամսական կտրվածքով երկու խաղ-զվարճալիքի դիտարկում: |
| | | Սաների հետ տարվող անհատական աշխատանքի ուսումնասիրություն | | | | | | | Դիտարկել մանկավարժների կողմից սաների հետ անհատական աշխատանքների պլանավորման և իրականացման գործընթացը՝ սանի հետ իրականացված անհատական աշխատանքի բովանդակությունը, դրա արդյունքները՝ ներառյալ սանի գրանցած հաջողությունները և դեռևս չհաղթահարված խնդիրները: |
| | | Մանկավարժական նորույթների հաղորդում | | | | | | | ՆՈւՅ-ում կիրառվող ուսուցման փոխգործուն մեթոդների մասին տեսական և գործնական գիտելիքների տրամադրում և դրանց ուսումնական գործընթացում կիրառում: Այնուհետև փոխգործուն մեթոդների |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | կիրառման արդյունավետության դիտարկում մեթոդիստի կողմից հետադարձ կապի ապահովմամբ: |
| | | Փոխայցելություններ տարբեր խմբեր | | | | | | | Փորձի փոխանակման նպատակով՝ տարակարգ ստացած մասնագետ(ներ)ի կողմից պարապմունքների անցկացման փոխադարձ դիտարկումներ տարբեր տարիքային խմբերում: |
| | | Համագործակցություն ՏՄԱԿ-ի հետ | | | | | | | Կազմակերպել ՆՈւՅ ընդունված նոր սաների ուսումնառության ներուժը բացահայտող գնահատման գործընթացի հետ կապված աշխատանքներ: |
| | **Ծնողների հետ աշխատանք** | Հոգեբանի կողմից աջակցություն ծնողներին | | | | | | | Անցկացնել սեմինար, առաջարկվող թեմա՝ «Երեք տարեկանի ճգնաժամ»: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսատնտես** | Սաների ընթացիկ ընդունելության կազմակերպում | | | | | | | Սաների անձնական գործերի կազմում և մուտքագրում՝ նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ:(emis.am) |
| | Աշխատանք հաշվապահի հետ | | | | | | | «——» թվականի բյուջեի քննարկում և պլանավորում: |
| | | | | | | | | Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ նոյեմբեր ամսվա համար: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ակ ան և վա րչա կա ն աշ խա տա նքն եր** | | | | | | | | Կատարած ծախսերի վերաբերյալ համայնքի ֆինանսական բաժին հաշվետվության ներկայացում: |
| | Աշխատանք տնտեսվարի հետ | | | | | | | Հաշվարկել սննդի շարժի մնացորդները: Կազմակերպության ակտիվների գույքագրում և ոչ պիտանի գույքի դուրս գրում: |
| | Ձմռան նախապատրաստական աշխատանքներ | | | | | | | Ձեռք բերել ձմռան նախապատրաստման նպատակով անհրաժեշտ պարագաներ և նյութեր: |
| | Աշխատանք բուժքրոջ հետ | | | | | | | Տարվա ցուրտ եղանակին հետևել մանկապարտեզի խմբասենյակների, ննջասենյակների, միջանցքների, սանհանգույցների պահանջվող ջերմաստիճանների պահպանմանը: |
| | Ներքին գնահատման աշխատանքների իրականացում | | | | | | | Հիմք ընդունելով ՆՈւՀ-ի ներքին գնահատման հարցաշարը՝ իրականացնել տվյալ ժամանակահատվածի առաջնահերթ չափանիշների գնահատում: |

Լրացուցիչ նշումներ-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------

●Օրինակելի պարապմունքների քանակը որոշվում է մանկավարժական խորհրդի կողմից:

●●Ամսական կտրվածքով տրված էքսկուրսիաների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

●●●Ամսական կտրվածքով տրված միջոցառումների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

| **Աշխատանքի տեսակը** | | **Կատարող անձինք** | I **շաբաթ** | II **շաբաթ** | III **շաբաթ** | IV **շաբաթ** | **Նշումներ կատարման մասին** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | Աշխատանքի բովանդակությունը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնադաստիարակչական աշխատանքներ | Կազմակերպչական մանկավարժական աշխատանք | Ամանորյա միջոցառումների կազմակերպում | | | | | | Սաների մասնակցությամբ կազմակերպել ամանորյա միջոցառումներ, մրցակցային խաղեր և այլն: |
| | | Ծնողական համայնքի կողմից ամանորյա միջոցառման նախապատրաստում և անցկացում | | | | | | Խթանել ՆՈւՀ-ծնողական համայնք համագործակցությունը՝ ստեղծելով պայմաններ ծնողական համայնքի կողմից ստեղծագործական աշխատանքի միջոցով սաների կրթության զարգացման ուղղությամբ: |
| | | Էքսկուրսիաների կազմակերպում • | | | | | | Տվյալ ամսվա թեմատիկ պլանավորման համատեքստում, հնարավորության դեպքում, բոլոր տարիքային խմբերում իրականացնել էքսկուրսիաներ: |
| | Մեթոդական աշխատանք | Մեթոդժամի անցկացում | | | | | | «Նշել թեման» թեմայով մեթոդ ժամի անցկացում՝ ելնելով տվյալ ՆՈւՀ-ի մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված կարիքներից: |
| | | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դիտարկում | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ ամսական(դեկտեմբեր) կտրվածքով պետք է կատարվի ուսումնադաստիարակչական աշխատանքների առնվազն մեկ դիտարկում: Դիտարկումը իրականացվում է ամբողջ շաբաթվա ընթացքում և արձանագրվում՝ շաբաթական դիտարկման վերջին օրը: |
| | | Պարապմունքի կամ խաղ-զվարճալիքի դիտարկում | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ դեկտեմբեր ամսվա ընթացքում պետք է կատարվի առնվազն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճալիքի դիտարկում: Օրվա 2-րդ կեսին աշխատող դաստիարակների մոտ կատարվում է ամսական կտրվածքով երկու խաղ-զվարճալիքի դիտարկում: |
| | | Նախադպրոցական կրթության ոլորտում մանկավարժագիտական նորույթների հաղորդում | | | | | | | Ուսումնական ձեռնարկի, ուսումնաօժանդակ նյութերի բովանդակության ներկայացում և քննարկում: |
| | **Ծնողների հետ աշխատանք** | Լոգոպեդի կողմից աջակցություն ծնողներին | | | | | | | Առաջարկվում է անցկացնել սեմինար, օրինակ՝ «Խաղեր՝ ուղղված խոսքի հնչյունային կուլտուրայի զարգացմանը» թեմայով: |
| **Ֆինանսատնտեսական և վարչական աշխատանքներ** | | Սաների ընթացիկ ընդունելության կազմակերպում | | | | | | | Նոր ընդունվող սաների անձնական գործերի կազմում և մուտքագրում՝ նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ:(emis.am) |
| | | Նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների ուսումնասիրում | | | | | | | Ծանոթանալ ՆՈւՀ-ի գործունեության համար անհրաժեշտ իրավական ակտերում տեղ գտած փոփոխություններին, լրացումներին, ուղեցույցներին և ըստ անհրաժեշտության դրանք ներդնել ՆՈւՀ-ում: |
| | | Աշխատանք հաշվապահի հետ | | | | | | | Մատակարարների հետ որակի և քանակի վերաբերյալ փոխադարձ ակտերի կազմում:<br>Սննդամթերքի տեխնիկական բնութագրերի ուսումնասիրություն:<br>Գույքի տեխնիկական բնութագրերի ուսումնասիրություն: |
| | | | | | | | | | Տարեկան նախահաշվի կազմում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ դեկտեմբեր ամսվա համար: |
| | | | | | | | | Կատարած ծախսերի վերաբերյալ համայնքի ֆինանսական բաժին հաշվետվության ներկայացում: |
| | Անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերում | | | | | | | Ամանորին ընդառաջ երաժշտական դահլիճի, մանկապարտեզի ձևավորման աշխատանքների իրականացում: |
| | Աշխատանք տնտեսվարի հետ | | | | | | | Սննդի կազմակերպում: Սննդի շարժի մնացորդների հաշվարկ: |

Լրացուցիչ նշումներ---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

●Ամսական կտրվածքով տրված էքսկուրսիաների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

# ՀՈՒՆՎԱՐ

| Աշխատանքի տեսակը | | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող անձինք | I շաբաթ | II շաբաթ | III շաբաթ | IV շաբաթ | Նշումներ կատարման մասին | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ուսումնադաստիարա** | **Կազմակերպչական մանկավարժակա** | Էքսկուրսիաների կազմակերպում● | | | | | | | Տվյալ ամսվա թեմատիկ պլանավորման համատեքստում, հնարավորության դեպքում, բոլոր տարիքային խմբերում իրականացնել էքսկուրսիաներ: |
| | | Միջոցառումների կազմակերպում●● | | | | | | | Սաների մասնակցությամբ կազմակերպել թեմատիկ միջոցառումներ, խաղ-զվարճալիքներ, մրցակցային խաղեր և այլն: |
| | | ՆՈՒՀ-ՏՄԱԿ համագործակցություն | | | | | | | ՆՈՒՀ-ի մեթոդիստի և տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը, համատեղ, |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **կչական աշխատանքներ** | **ն աշխատանք** | | | | | | | | երկու ամիսը մեկ անգամ, հրավիրում են միասնական ժողով՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրած աջակցության ծառայությունները, արձանագրելու սաների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ ներկայացնելու սանի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ: Միասնական ժողովի արձանագրությունը հաստատում են մեթոդիստը և տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը (Ձև 4): |
| | **Մեթոդական աշխատանք** | Մեթոդժամի անցկացում | | | | | | | Հետադարձ կապ ապահովել ինքնակրթության թեմաների շուրջ քննարկումների ծավալմամբ: |
| | | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ ամսական(հունվար) կտրվածքով պետք է կատարվի ուսումնադաստիարակչական աշխատանքների առնվազն մեկ դիտարկում: Դիտարկումը իրականացվում է ամբողջ շաբաթվա ընթացքում և արձանագրվում՝ շաբաթական դիտարկման վերջին օրը: |
| | | Պարապմունքի կամ խաղ-զվարճալիքի դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ հունվար ամսվա ընթացքում պետք է կատարվի առնվազն երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճալիքի դիտարկում: Օրվա 2-րդ կեսին աշխատող դաստիարակների մոտ կատարվում է ամսական կտրվածքով երկու խաղ-զվարճալիքի դիտարկում: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սաների հետ տարվող անհատական աշխատանքի ուսումնասիրություն | | | | | | | Դիտարկել մանկավարժների կողմից սաների հետ անհատական աշխատանքների պլանավորման և իրականացման գործընթացը: Արձանագրել յուրաքանչյուր սանի հետ իրականացված աշխատանքի բովանդակությունը, դրա արդյունքները՝ ներառյալ սանի գրանցած հաջողությունները և դեռևս չհաղթահարված խնդիրները: |
| | **Ծնողների հետ աշխատանք** | Հանդիպում ծնողների հետ | | | | | | | Համագործակցել ծնողների հետ՝ պարբերաբար տրամադրելով տեղեկատվություն սաների հետ կազմակերպվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակության մասին: |
| **Ֆինանսատնտեսական և վարչական աշխատանքներ** | | Նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների ուսումնասիրում | | | | | | | Ծանոթանալ ՆՈւՀ-ի գործունեության համար անհրաժեշտ իրավական ակտերում տեղ գտած փոփոխություններին, լրացումներին, ուղեցույցներին և ըստ անհրաժեշտության դրանք ներդնել ՆՈւՀ-ում: |
| | | Սաների ընթացիկ ընդունելության կազմակերպում | | | | | | | Նոր ընդունվող սաների անձնական գործերի կազմում և մուտքագրում՝ նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ: (emis.am) |
| | | Աշխատանք տնտեսվարի հետ | | | | | | | Սննդի կազմակերպում: |
| | | Աշխատանք բուժքրոջ հետ | | | | | | | Սաների բժշկական քարտերի հաշվառման իրականացում: Աշխատակիցների պարբերական բուժզննության կազմակերպում: |
| | | Աշխատանք հաշվապահի հետ | | | | | | | Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ հունվար ամսվա համար: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Կատարած ծախսերի վերաբերյալ համայնքի ֆինանսական բաժին հաշվետվության ներկայացում: |
| | | | | | | | | Մատակարարների հետ պայմանագրերի կնքում: |
| | Ուսումնական աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում և համալրում | | | | | | | Աշխատանքը կազմակերպել ըստ դաստիարակների կողմից ներկայացված պահանջագրերի: |
| | Ներքին գնահատման աշխատանքների իրականացում | | | | | | | Հիմք ընդունելով ՆՈւՀ-ի ներքին գնահատման հարցաշարը` իրականացնել տվյալ ժամանակահատվածի առաջնահերթ չափանիշների գնահատում: |

Լրացուցիչ նշումներ-----------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------

●Ամսական կտրվածքով տրված էքսկուրսիաների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

●●Ամսական կտրվածքով տրված միջոցառումների կազմակերպումն իրականացնել ըստ անհրաժեշտության:

| **ՓԵՏՐՎԱՐ** | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Աշխատանքի տեսակը** | | **Աշխատանքի բովանդակությունը** | **Կատարող անձինք** | **I շաբաթ** | **II շաբաթ** | **III շաբաթ** | **IV շաբաթ** | **Նշումներ կատարման մասին** | **Ծանոթություն** |
| **Ուսում** | **Կազմակերպչ** | էքսկուրսիաների կազմակերպում● | | | | | | | Տվյալ ամսվա թեմատիկ պլանավորման համատեքստում, հնարավորության դեպքում, բոլոր տարիքային խմբերում իրականացնել էքսկուրսիաներ: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նադաստիարակչական աշխատանքներ | ական մանկավարժական աշխատանք | Միջոցառումների կազմակերպում●● | | | | | | | Սաների մասնակցությամբ կազմակերպել թեմատիկ միջոցառումներ, խաղ-զվարճալիքներ, մրցակցային խաղեր և այլն: |
| | Մեթոդական աշխատանք | Աջակցություն դաստիարակներին | | | | | | | Կազմակերպել խորհրդատվություններ դաստիարակների ընտրած թեմաների ուղղությամբ: |
| | | Նախադպրոցական տարիքի սաների զարգացման և կրթության արդյունքի գնահատում (Ձևավորող գնահատում) ●●● | | | | | | | Բոլոր տարիքային խմբերում իրականացնել նախադպրոցական տարիքի սաների զարգացման և կրթության արդյունքի գնահատման գործընթաց: |
| | | Մանկավարժական խորհրդի նիստի նախապատրաստում և անցկացում | | | | | | | Անցկացնել հերթական մանկավարժական խորհրդի նիստը՝ նախապես ներկայացնելով օրակարգը: |
| | | Ուսումնադաստիարակչական | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ ամսական (փետրվար) |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքների դիտարկում | | | | | | | կտրվածքով պետք է կատարվի ուսումնադաստիարակչական աշխատանքների առնվազն մեկ դիտարկում: Դիտարկումը իրականացվում է ամբողջ շաբաթվա ընթացքում և արձանագրվում՝ շաբաթական դիտարկման վերջին օրը: |
| | | Պարապմունքի կամ խաղ-զվարճալիքի դիտարկում | | | | | | | Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի մոտ փետրվար ամսվա ընթացքում պետք է կատարվի առնվազն երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճալիքի դիտարկում: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ծնողների հետ աշխատանք** | Սեմինարի անցկացում ծնողական համայնքի կողմից | | | | | | | Աջակցել ծնողներին արդիական թեմայի ընտրության հարցում: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ: |
| **Ֆինանսատնտեսական և վարչական** | | Նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների ուսումնասիրում | | | | | | | Ծանոթանալ ՆՈւՀ-ի գործունեության համար անհրաժեշտ իրավական ակտերում տեղ գտած փոփոխություններին, լրացումներին, ուղեցույցներին և ըստ անհրաժեշտության դրանք ներդնել ՆՈւՀ-ում: |
| | | Սաների ընթացիկ ընդունելության կազմակերպում | | | | | | | Նոր ընդունվող սաների անձնական գործերի կազմում և մուտքագրում՝ նախադպրոցական կրթության |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **աշխատանքներ** | | | | | | | | կառավարման տեղեկատվական համակարգ:(emis.am) |
| | Աշխատանք հաշվապահի հետ | | | | | | | Աշխատողների մասնագիտական ուսուցման մասին (1-ԱՄՈւ) տարեկան հաշվետվություն: |
